Հոգաբարձուների խորհրդի հարգելի նախագահ և անդամներ, առաջիկա հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգում խնդրում եմ ներառել և քննարկել հետևյալ հարցերը՝

1. Մեր հաստատությունում դասավանդվող երկու օտար լեզուների (ռուսերեն, գերմաներեն) հետ զուգահեռ բաղադրիչ ժամաքանակի հաշվին 5-րդ դասարանում (շաբաթական 2 ժամ) դասավանդել երրորդ օտար լեզուն՝ անգլերեն:
2. Ֆիզիկայի ուսուցչուհի Գայանե Կարապետյանը իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից՝ կրթությունը եվրոպայում շարունակելու նպատակով, առաջացել է ֆիզիկայի ուսուցչի թափուր աշխատատեղ: Խնդրում եմ քննարկել օգոստոս ամսին ֆիզիկայի ուսուցչի մրցույթի հայտարարման անհրաժեշտությունը:
3. Դպրոցի մուտքի շինարարական աշխատանքների կազմակերպման համար խնդրում եմ դիմել <<Դար>> հիմնադրամին աջակցություն ցուցաբերելու համար, քանզի այն շատ հրատապ է: Աջակցություն չստանալու դեպքում դպրոցի բյուջեի նախահաշվով նախատեսված <<Շենքի ընթացիկ նորոգման և պահպանման>> հոդվածի գումարից ներդնել նշված հարցին լուծում տալու համար:

Հարգանքով՝ դպրոցի տնօրեն Ա. Հովհաննիսյան